ԿՐԹԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Վրաստանի բուհերում հայտարարած 44 հազար ազատ տեղերի համար, ներկա դրությամբ, Միասնական ազգային քննությունների մասնակցության համար արդեն գրանցվել է 31 հազար դիմորդ:

Ինչպես հայտարարեց քննությունների կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, ներկա դրությամբ, գրանցված դիմորդների թիվը լրիվությամբ բնական է: Մինչեւ գրանցման վերջնաժամկետն այդ թիվը է'լ ավելի կաճի եւ, ենթադրաբար, կհասնի 35 հազարի, քանի որ ամենահնտեսիվ գրանցումն իրականացվում է ժամկետի սպառումից երկու օրվա ընթացքում:

Չնայած նրան, որ այս տարի, ամենայն հավանականությամբ, գրանցված դիմորդների թիվը կգիջի բուհերի կողմից ներկայացված ազատ տեղերի քանակությանը, Միմինոշվիլու պարզաբանմամբ, շատ դիմորդներ բուհ ընդունվել չեն կարողանա, քանի որ նրանք նախ հաղթահարելու են քննական առարկաների համար սահմանված արգելագիծը: Ինչպես տեղեկացրեց քննությունների կենտրոնի ղեկավարը, նախորդ տարիներին Միասնական ազգային քննությունների համար գրանցում էր անցնում 30-ից մինչեւ 35 հազար դիմորդ: «Մասնավորապես, անցյալ տարի գրանցվել էր 42 հազար դիմորդ, այնքան, որքան մրցութային տեղերն էին, թեպետ ուսանողի կարգավիճակ ստացավ ընդամենը 28 հազարը: Մոտ 13 հազար տեղ բուհերում մնաց ազատ»,- ընդգծեց Մայա Միմինոշվիլին:

ԱՊՐԻԼԻ 1-Ի՞Ց ԿԳՐԱՆՑՎԵՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԸ

Ապրիլի 1-ից կսկսվի նոր ուսումնական տարվա համար առաջին դասարանցիների գրանցումը: Հատուկ հարցաթերթիկը կներկայացվի www.mes.gov.ge. կայքէջում: Օնլայն գրանցումը կշարունակվի մինչեւ ապրիլի 19-ը ներառյալ:

Վրաստանի կրթության նախարարության տեղեկատվությամբ, այն ծնողները, ովքեր վերոնշյալ ժամկետում չեն հասցնի գրանցել իրենց երեխաներին, դա կարող են կատարել մայիսի 1-ից մինչեւ հունիսի 20-ը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺ ՍԱՄՎԵԼ ՓՈՒԹՈՒԼՅԱՆԻ ԵՐԿԱՐ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Նինոծմինդայի թիվ 3 հանրային դպրոցում շատ են վաստակաշատ ուսուցիչները, որոնցից մի քանիսն արդեն մանկավարժի կեսդարյա ճանապարհ են անցել: Նրանց համար աշակերտը ոչ թե կարգավիճակ է, որը համախմբում է դասարանում նստածներին, այլ առանձին անհատներ, որոնցից յուրաքանչյուրին ուսուցիչն ընկալում, յուրաքանչյուրի հետ հաղորդակցվում է առանձին-առանձին: Վաստակաշատ այս ուսուցիչներին է ընդհանրացնում Սամվել Փութուլյանը:



Փութուլյան-մանկավարժի ոդիսականը շատ երկար է: Այն արդեն հիսուն տարիների վաղեմություն ունի, որին հետադարձ հայացք գցելով նրա հիշողության մեջ էջ առ էջ վերականգնվում են անցած տարիները, որոնք լի են եղել իմաստալից առօրյայով:

Սամվել Փութուլյանը 1970թ.-ին ավարտել է Հյուսիսային Օսեթիայի Վլադիկավկազի (Օրջոնիկիձե) պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Մինչ այդ, բանակից զորացրվելուց հետո, աշխատանքի է անցել Ախալքալաքի շրջանի Գումբուրդո գյուղի 8-ամյա դպրոցում: Երկու տարի անց՝ տեղափոխվել է Նինոծմինդայի շրջկենտրոնի երեկոյան դպրոց: Այնուհետեւ աշխատել է Նինոծմինդայի շրջանի Օրոջալարի միջնակարգ դպրոցում, սկզբում փոխտնօրեն, հետո՝ տնօրեն (1969-1976թթ.): Այստեղից տեղափոխվում է Մեծ Խանչալիի միջնակարգ դպրոց, հանդես գալով որպես զինղեկ, դասավանդելով նաեւ պատմություն:

Իսկ 1988 թվականից աշխատում է Նինոծմինդայի թիվ 3 հանրային դպրոցում, որի փոխտնօրենն է եղել երկար տարիներ, ապա՝ տնօրենը: Իսկ այսօր համարվում է պատմության լավագույն ուսուցիչներից մեկը երկրամասում:

- Երբեք չեմ դժգոհել անընդհատ մի դպրոցից մյուսը տեղափոխվելու համար, որովհետեւ սիրում եմ իմ մասնագիտությունը, իմ սաներին, նրանց որեւէ հարցում օգտակար լինելն իմ պարտքն եմ համարում,- ասում է Սամվել Փութուլյանը:

Որտեղ էլ որ աշխատել է վաստակաշատ մանկավարժը, իր ողջ մասնագիտական հմտությունն ու հարուստ փորձն է ներդրել իսկական մարդու եւ մտավորականի, արժանավայել քաղաքացու եւ լավ ընկերոջ կոչման համար: Բացառիկ անձնավորություն է, մեծ համբավ ունի նա մեր քաղաքում: Դպրոցում նրան սիրում են բոլորը՝ ե'ւ գործընկերները, ե'ւ աշակերտները: Նրա մտահորիզոնի զարգացումը հարաշարժ է ժամանակի հետ: Նա յուրաքանչյուր դասն այնպես է անցկացնում, որ այն նպաստի աշակերտի համակողմանի զարգացմանն ու ինքնադրսեւորմանը, առաջնային տեղ տալով ուսուցչի մասնագիտական զարգացմանը:

Սամվել Փութուլյանի վաստակաշատ աշխատանքը բարձր է գնահատվել Նինոծմինդայի թիվ 3 հանրային դպրոցի տնօրինության, ծնողների, մանկավարժների եւ աշակերտների կողմից:

Բազմիցս նա արժանացել է գովասանագրերի ու շնորհակալագրերի:

Վերջերս, համեստ մթնոլորտում, նշվեց Սամվել Փութուլյանի աշխատանքային գործունեության 50-ամյակը, եւ այդ մթնոլորտը շատ լավ ներդաշնակում էր նրա բնավորությանը: Համոզված ենք, որ նրա մանկավարժական գործունեությունը դեռ երկար կշարունակվի:

Այդ օրը բազմաթիվ անկեղծ մաղթանքներ հնչեցին նրա հասցեին՝ «Քաջառողջություն, նորանոր ձեռքբերումներ ձեր կյանքում, ընկեր Փութուլյան»:

ԺԵՆՅԱ ԱՆՏՈՆՅԱՆ
Բանասեր

Ք. Նինոծմինդա

ԲԵՄԱՐՎԵՍՏ

ԴՐՎԱԳՆԵՐ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ



Բախտիար Հովակիմյանի «Դրամատուրգ Վաչե Հարությունյան» ծավալուն մենագրությունը, որը վերջերս լույս է տեսել Երեւանում, շնորհակալ գործ է անցյալ դարի հայ դրամատուրգիայի ու թատրոնի պատմության ուսումնասիրման ճանապարհին, արժեքավոր է նաեւ նրանով, որ վավերագրական հետաքրքիր փաստեր է պարունակում Խորհրդային Միության սահմաններում գործող հայկական, այդ թվում՝ Թբիլիսիի Պատանի հանդիսատեսի (1928-1945) եւ 1858-ին հիմնադրված այսօր Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնների մասին: Բայց մինչ այդ դրվագներին անդրադառնալը, նախ հակիրճ ներկայացնենք Վաչե Հարությունյան արվեստագետին (1900-1986):

Վաչե Հարությունյանը եղել է բազմաժանր գրող, կինոսցենարիստ եւ առավելապես դրամատուրգ ու թատերական գործիչ: Եղել է նաեւ իր ժամանակի անվանի մանկավարժ, ծննդավայր Կոշի (Հայաստանի Հոկտեմբերյանի, այսօր արդեն՝ Արմավիրի մարզ) առաջին դպրոցի հիմնադիրներից մեկը:

Իր դրամատիկական ժառանգությամբ, որ ընդգրկում է երեք տասնյակ պիեսներ, Երեւանի պետթատրոնի դերասան-ռեժիսոր Վավիկ Վարդանյանի հետ, Վահեն իր ավանդն է ներդրել ժամանակի թատերական խոշոր օջախների՝ Երեւանի, Լենինականի (այժմ՝ Գյումրի), Ղարաքիլիսայի (Վանաձոր), Հայաստանից դուրս՝ Բաքվի, Թբիլիսիի հայկական թատրոնների համար պրոֆեսիոնալ ռեժիսորներ, դերասաններ պատրաստող թատերական ստուդիաներ ստեղծելու գործում:

Ղազարոս Աղայանի հանրահայտ «Անահիտ» հեքիաթի հիման վրա Վահե Հարությունյանի կողմից ստեղծած նույնանուն պիեսին բախտ վիճակվեց բեմադրվել այն օրերի արդեն համբավավոր ու հայ թատերարվեստի ուսանելի ավանդույթներով հարուստ այն ժամանակ Վրաստանի մայրաքաղաքում գործող Պատանի հանդիսատեսի հայկական թատրոնում:

Իր արդիական հնչողությամբ վաղուց ի վեր թատերական գործիչների ուշադրությունը գրաված պիեսը պատահական չէր, որ նկատվեց Պատանի հանդիսատեսի թատրոնի տնօրեն Վաղարշակ Էլիբեկյանի կողմից: Ի դեպ, ասենք, որ Վաղարշակ Էլիբեկյանը շուտով դառնում է Ստ.Շահումյանի անվան պետհայդրամայի թատրոնի տնօրենը եւ համարյա 20 տարի աշխատում է այդ պաշտոնում, միաժամանակ նա հեղինակ էր մի քանի տասնյակ պիեսների, զբաղվում էր նկարչությամբ ու գեղարվեստական ձեւավորողն էր: Ապա, տեղափոխվելով Երեւան, զբաղվեց նկարչությամբ եւ մեծ համբավ ձեռք բերեց նկարչության ասպարեզում:

«Պիեսը գտավ ընդհանուր հավանություն եւ անպայման կբեմադրվի մեր թատրոնում»,- գրում է նա՝ 1940-ին Հարությունյանին հղած նամակում: Իսկ թատրոնի քարտուղարի՝ Հովհ.Ագուլյանը, ցանկանալով «հայ գրական-թատերական արժեքներից մեկը դարձնել նաեւ վրաց բեմի սեփականությունը», պիեսը վրացական բեմ հանելու հարցով, խոսում է Պատանի հանդիսատեսի վրացական թատրոնի ղեկավարներից մեկի՝ Գիորգի Դարիսպանաշվիլու հետ:

Ներկայացման բեմադրությունը իրականացրել է Ստ.Քափանակյանը, բայց, ինչպես նշում է մենագրության հեղինակ Բախտիար Հովակիմյանը, բեմադրության «սեւ» աշխատանքը կատարել է երիտասարդ ռեժիսոր Վանյա (Հովհաննես) Վարձիգուլյանը:

«Անահիտի» պրեմիերան Թբիլիսիի Պատանի հանդիսատեսի թատրոնում կայացել է 1941-ի հունիսի 11-12-ին, որին հրավիրված է եղել պիեսի հեղինակը, սակայն Հարությունյանին չի հաջողվել ներկա գտնվել իր պիեսի թբիլիսյան պրեմիերային: Ներկայացման հաջորդ օրը, էլիբեկյանը ոգեւորությամբ հեռագրում է Հարությունյանին. «Անահիտի» պրեմիերան անցավ մեծ հաջողությամբ: Ընդունեցեք կոլեկտիվի եւ դիրեկցիայի ջերմ շնորհավորանքը»:

Թատրոնը հետագայում, «Անահիտ» ներկայացումով, պատվել է Ղազարոս Աղայանի ծննդյան 100-ամյակը: Բայց Հարությունյանը այս անգամ էլ ներկա չի գտնվել ներկայացմանը, եւ դա հասկանալի էր,- Ղ.Աղայանի հոբելյանը նշվել է 1941-ի հունիսի 22-ին, Հայրենական պատերազմի սկզբին...

Պրեմիերային մասնակցել են ավելի քան քսան դերասան, այդ շարքում՝ Հ.Քարտաշյանը, Ծ.Գրիգորյանը, Լ.Ֆիդանյանը, Մ.Արզումանյանը: Իսկ Վաչագանի դերը կատարել է այն օրերին երիտասարդ դերասան, ծնունդով թբիլիսցի Բաբկեն Ներսիսյանը, ով հետագայում դարձավ նախ՝ Թբիլիսիի Ստ.Շահումյանի անվան պետհայդրամայի թատրոնի, իսկ Երեւան տեղափոխվելուց հետո՝ տեղի Գ.Սունդուկյանի անվան ազգային թատրոնի, ապա եւ՝ հայ կինոյի առաջատար դերասաններից մեկը:

«Համեմատելով Թբիլիսիի եւ Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնների բեմադրությունները՝ պետք է հայտնեմ, որ մեր բեմադրությունը գերազանցել է ձեր թատրոնի բեմադրությանը: Ե'վ ռեժիսորական աշխատանքը, ե'ւ դերասանների խաղարկումը, ե'ւ երաժշտական ձեւավորումը, ե'ւ նկարչի աշխատանքը մեր թատրոնի նվաճումը պիտի համարվեն»,- բեմադրությունից մի քանի ամիս անց Հարությունյանին հասցեագրված նամակում գրել է ռեժիսոր Վ.Վարձիգուլյանը:

«Անահիտի» հաջողությանը նպաստել են թատրոնում աշխատող կոմպոզիտոր, «Անուշ» օպերայի հեղինակ Արմեն Տիգրանյանի, նկարիչ-ձեւավորող Մանուկ Կիրակոսյանի, պարերի բեմադրող, օպերային թատրոնի բալետի արտիստ Գարրի Բարխուդարյանի բարձրարվեստ ձեւավորումները:

«Անահիտ» պիեսի բեմական կյանքը շարունակվել է հետպատերազմյան տարիներին եւս, առավելապես՝ Հայաստանից դուրս գործող հայկական թատրոններում: Առաջինը պիեսին անդրադարձել է Թբիլիսիի Ստ.Շահումյանի անվան պետհայդրամայի թատրոնը: Բեմադրությունն իրականացրել էր թատրոնի այն ժամանակվա գեղարվեստական ղեկավար Ֆերդինանդ Բժիկյանը 1959թ.-ի մայիսին: Ի դեպ, նա ցանկացել է ավելի շուտ անդրադառնալ պիեսին, բայց հետաձգել է թատրոնի 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառման պատճառով: Ներկայացման նկարչական ձեւավորումը կատարել է բեմանկարիչ Ռոբերտ Նալբանդյանը, իսկ երաժշտության հեղինակը կոմպոզիտոր Է.Աբրահամյանն է:

«Անահիտի» բեմադրական կենսագրության մեջ, ինչպես նշում է մենագրության հեղինակ Բախտիար Հովակիմյանը, երեւի այնպիսի ուժեղ կատարողական կազմ երբեք չի արձանագրվել, ինչպիսին ունեցել է Թբիլիսիի պետհայդրամայի բեմականացումը, որին ներգրավված են եղել նրա լավագույն ուժերը. Արշակ Արշակունին՝ Առան, Էմմա Ստեփանյանը՝ Անահիտ, Սուրեն Եղիազարյանը եւ Արշակ Ալիխանյանը՝ Վաչե թագավոր, Մարիամիկ Մոճոռյանը եւ Ծաղիկ Վրույրը՝ թագուհի, Ռաֆայել Պապովյանը՝ Վաչագան, Դորի Ամիրբեկյանը՝ Վաղինակ, Ասյա Ժամկոչյանը եւ Մ.Շահվերդյանը՝ Սաթենիկ, Աշոտ Քաջվորյանը՝ Հազարապետ Օշին, Հայկ Ումիկյանը՝ Մանգուն իշխան, Ջ.Աթաբեկյանը՝ Օշապ, Կ.Քաղքցյանը՝ Մոգպետ, Հր.Սիմոնյանը՝ Տանջանոցի վերակացու եւ ուրիշներ:

Մեր խոսքն ուզում ենք ավարտել թատերարվեստի նշանավոր գործիչ, դրամատուրգիայի տեսաբան Արծվի Հունանյանի 1981թ.-ին հայտնած ուշագրավ կարծիքով.

«...Վաչե Հարությունյանն այն քչերից է, որի գրած երեք տասնյակի հասնող պիեսները բեմադրվել են Հայաստանի եւ նրանից դուրս գործող հայ թատրոններում: Հարությունյանի դրամատուրգիայի հիմնական արժանիքը ժամանակակիցներին հուզող հրատապ հարցերը գեղարվեստորեն մարմնավորելու ունակությունն է, հանդիսատեսին դաիլիճ բերելու ընդունակությունը, որն արժանի ճանաչում է բերել հեղինակին»:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ð²ðò — ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ì²ðì°È²Î°ðä

ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ՄԵԾ ՊԱՀՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԻՀԱՐԵԼ

Ասում են, Մեծ պահքը բոլորիս հարմար ժամանակահատվածն է իրական դիետա պահպանելու համար: Թեպետ, անկեղծ ասած, նման զուգահեռի անցկացումը այնքան էլ գեղեցիկ չեմ համարում: Ի՞նչ կասեիք:

Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

Թբիլիսի

Ցավոք, այսօր շատերը Մեծ պահքին հետեւում են ոչ թե հոգեւոր մաքրության հասնելու համար, այլ միայն որովհետեւ ուզում են նիհարել: Բայց հնարավո՞ր է նիհարել Մեծ պահքի ժամանակ:

Այդ կապակցությամբ դիետոլոգներն առաջին հերթին նշում են, որ, չնայած այսօր շատերը պահքն օգտագործում են նիհարելու համար, նիհարելը Մեծ պահքի նպատակ չէ: Մեծ պահքի ավանդույթը ծնվել է քրիստոնեության արշալույսին, երբ մարդկությունն ավելորդ քաշի խնդիր չի ունեցել:

Նրանց հավաստմամբ, Մեծ պահքի ժամանակ, թերեւս, կնիհարեն այն մարդիկ, ովքեր գիրանում են չափից շատ խորոված, քաբաբ եւ ալկոհոլ օգտագործելու հետեւանքով:

Մյուսների համար գրեթե անհնար կլինի նիհարել: Ինչո՞ւ:

Բանն այն է, որ, դիետոլոգների պնդմամբ, բուսական սնունդն այնքան արագ չի հագեցնում, որքան կենդանական ծագման ուտելիքը: Ուստի, մարդը կարող է շատ ուտել ու ավելի շատ կալորիա ստանալ, քան պահքից առաջ:

Բացի դրանից՝ մեզանում ամռանն ու ձմռանը մրգերի ու բանջարեղենի մեծ ընտրություն չկա, այդ պատճառով պահք պահող մարդիկ սկսում են հիմնականում հաց, մակարոն, բրինձ եւ կարտոֆիլ օգտագործել: Այդ մթերքները շատ դատարկ ածխաջրեր են պարունակում, որոնք կարող են գիրության պատճառ դառնալ:

Մսից հրաժարվելը նույնպես չի նպաստում նիհարելուն, քանի որ անյուղ միսն ամենադիետիկ մթերքներից է, մինչդեռ վերը նշված բոլոր մթերքները բավական կալորիական են:

Այդ պատճառով, ըստ դիետոլոգների եզրակացության, Մեծ պահքի ժամանակ մեծ է ոչ միայն չնիհարելու, այլեւ՝ գիրանալու հավանականությունը:

Î²Ð² ìàðàôØ

ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՏՈՒՆԸ՝ ԼԱՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ինչպե՞ս կահավորել բնակարանը, որպեսզի կարողանանք բեռնաթափվել օրվա ծանրաբեռնվածությունից:

Ն.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բաթումի

Հիշեք. ձեր տունը խանութ չէ, հետեւաբար, գնեք միայն այն ամենը, ինչն իսկապես անհրաժեշտ է, ոչ մի ավելորդ բան: Ամեն ինչ պետք է ոչ միայն գեղեցիկ, այլեւ գործառնական լինի: Հատկապես ուշադիր եղեք գույների ընտրության հարցում: Կարող եք ընդհանուր պատկերը լրացնել վառ գույների առարկաներով, որոնք աչք են շոյում, սակայն միաժամանակ տարածության ընդհանուր տրամադրությունը չեն խախտում: Շատ կարեւոր է ճիշտ լուսավորությունը: Ժամանակակից դիզայներները խորհուրդ են տալիս չսահմանափակվել մեկ ջահով եւ կիրառել հատվածական լուսավորություն: Մի' մոռացեք ծաղիկների մասին:

Բնակարանին գեղեցիկ տեսք, ջերմություն եւ հարմարավետության զգացողություն են հաղորդում ծաղիկները: Ներկայումս ծաղկային ձեւավորումների բազմաթիվ տարբերակներ կան:

Մի' շտապեք ծաղիկները լուսամուտագոգերին շարել, որոնք ժամանակակից շատ տներում բավականին նեղ են: Բացի այդ նաեւ ջեռուցման սարքերից արձակվող տաք օդը, պատուհանից ներս ընկնող ուժեղ լույսը, դրսի ջերմաստիճանի կտրուկ տատանումները, ցերեկային արեւի ճառագայթներն ու գիշերային ցուրտը վնասակար ազդեցություն են թողնում սենյակային բույսերի վրա, որոնցից յուրաքանչյուրը ջերմային եւ լուսային իր ռեժիմն ունի:

Ժամանակակից կահույքը, բնափայտի նախշերը հրաշալիորեն ներդաշնակվում են բուսական կոմպոզիցիաների հետ, այնպես որ, ծաղիկները կարելի է դասավորել ցածր պահարանների, գրքերի դարակների, կողային բաց հատվածներով գրասեղանների վրա:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԻՎԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՍԻՐՏԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Կիվին կարող է պաշտպանել սիրտը տարբեր հիվանդություններից: Նորվեգացի գիտնականները նկատել են, որ կիվին օրգանիզմի վրա ազդում է այնպես, ինչպես ասպիրինը:

Կիվին կարող է այրել այն ճարպերը, որոնք փակում են շնչերակը՝ նվազեցնելով թրոմբների առաջացման ռիսկը: Այն, միաժամանակ շատ համեղ ու օգտակար է: Օրական 2-3 կիվիի օգտագործումը կարող է սիրտը պաշտպանել հիվանդություններից:

Նման սննդակարգը 1 ամիս պաշտպանելու դեպքում արյան մեջ 15 տոկոսով կնվազի ճարպաթթուների մակարդակը եւ 18 տոկոսով՝ թրոմբների ձեւավորման ռիսկը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՐԳՈԼՈԳԻԱ. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՇԿԻ ԱԼԵՐԳԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գարնանամուտի հետ միասին աճում է ալերգիկ հիվանդությունների թիվը: Դրանից բոլորից շատ տուժում են երեխաները: Ի՞նչ ախտանիշներով են տարբերվում մանուկների մոտ հաճախակի հայտնվող ալերգիկ հիվանդությունները:

Մաշկի ալերգիկ հիվանդությունների պատճառ են դառնում տարբեր ալերգեններ (սննդամթերք, դեղորայք, սնկեր, մանրէներ, քիմիական նյութեր, հոտեր եւ այլն), որոնց ազդեցության հետեւանքով մաշկի մակերեսը բորբոքվում է:

Երեխաների մաշկի թեթեւակի փոփոխություններ հաճախ են նկատվում: Դրանցից շատերն արագ վերանում են, սակայն կարող են առաջանալ նաեւ մի շարք վարակիչ հիվանդությունների ժամանակ, որոնք շտապ բուժման կարիք ունեն: Ցանը՝ այլ ախտանիշների հետ, կարող է հուշել որեւէ վարակիչ հիվանդության առկայության մասին: Երբեմն դա կարող է լինել ալերգիայի միակ արտահայտությունը, կամ համակցվել դրա մյուս ձեւերի հետ: Պետք է ուշադիր լինել հատկապես հիվանդությունը նոր սկսվելու ժամանակ:

Ալերգիկ ծագման մաշկաբորբերի վաղ ախտորոշման համար նշանակություն ունի հանգամանորեն հավաքված անամնեզը, որը հնարավորություն կտա պարզելու օրգանիզմի զգայունության բարձրացումն այս կամ այն ալերգենի նկատմամբ: Պետք է պարզել, թե ընտանիքում արդյո՞ք կան ալերգիայով հիվանդներ, ինչպես են ընթացել մոր հղիությունն ու ծննդաբերությունը եւ սնուցվել նորածինը:

Սննդային ալերգիայի հայտնաբերման համար կարեւոր նշանակություն ունի սննդային օրագիր կազմելը: Տետրի էջը բաժանել 2 մասի: Ձախ մասում լրացնել երեխայի ընդունած սննդի տեսակը, իսկ աջում՝ դրա նկատմամբ մաշկի եւ լորձաթաղանթների ռեակցիան: Սրա էությունն այն է, որ բացառման սկզբունքով՝ 7-10 օրվա ընթացքում երեխայի սննդակարգից հանվում է սննդի այն տեսակը, որը կարող է ալերգիկ ռեակցիա առաջացնել: Փորձը համարվում է դրական, եթե ենթադրյալ ալերգենը բացառելուց հետո կլինիկական նշանները մեղմանում են կամ անհետանում: Մյուս ախտորոշիչ փորձերը կատարվում են մասնագիտացված լաբորատորիաներում՝ մասնագետ բժշկի հսկողությամբ:

Մաշկի ալերգիկ հիվանդություններից են իսկական էկզեման, նեյրոդերմիտը՝ նյարդային ծագման մաշկաբորբը, շփումային մաշկաբորբը, եղնջացանը, Լայելի, Սթիվենս-Ջոնսոնի համախտանիշները եւ այլն:

Մանկական էկզեմա

Ալերգիայի համեմատաբար հաճախ հանդիպող արտահայտությունն է: Սովորաբար ի հայտ է գալիս կյանքի առաջին կիսամյակում: Նշաններն են մաշկի հիպերեմիան՝ արյունալեցումը, թույլ այտուցը, բշտիկային ցանավորումը: Բշտիկները պատռվում են, առաջանում է խոնավ մակերես, իսկ հետագայում՝ կեղեւիկներ: Դա ուղեկցվում է ուժեղ քորով: Քորելիս լինում է արյունային արտադրություն, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում թարախային վարակի թափանցման համար: Ապա միանում է երկրորդային վարակը, եւ առաջանում են թարախային օջախներ: Էկզեմատոզ օջախները հիմնականում տեղակայվում են այտերին, ճակատին, ստորին ծնոտի տակ, իսկ հետագայում՝ մարմնի վրա: Արյունային եւ թարախային արտադրության պատճառով կեղեւները լինում են գորշդեղնավուն:

Ստրոֆուլոս

Մաշկային ալերգիայի համեմատաբար ծանր տարբերակն է: Բնորոշ են հանգուցավոր ցանավորումը եւ ուժեղ քորը: Ցանն ավելի հաճախ տեղակայվում է վերջույթների վրա:

Նեյրոդերմիտ

Հաճախ հանդիպում է 3-5 տարեկանից մեծ երեխաների մոտ: Ունի երկու ձեւ՝ տարածուն եւ մեկուսացած: Տարածունի ժամանակ մաշկային փոփոխությունները հիմնականում լինում են դեմքին, պարանոցին, դաստակին, արմնկային եւ ծնկային փոսիկներում:

Մեկուսացած ձեւի դեպքում սահմանափակ տեղամասերում նկատվում է մաշկի համաչափ ախտահարում:

Եղնջացան

Բնորոշ է մաշկի մակերեսին բարձր հանգուցիկների եւ բշտերի առաջացումով: Ցանն ունենում է տարբեր չափսեր՝ ոսպի փոքր հատիկից մինչեւ մեծը: Կարող է լինել նաեւ միաձուլված: Այն տեղակայվում է ամենուրեք, բայց ավելի հաճախ վերջույթների վրա: Ցանավորումն ուղեկցվում է քորով: Սուր եղնջացանը կարճ է տեւում, մի քանի ժամ հետո կարող է անհետանալ՝ չթողնելով ոչ մի հետք:

Կվինկեի այտուց

Տեղակայվում է այն տեղերում, որտեղ ենթամաշկային ճարպաշերտը հաստ է: Մաշկի վրա առաջանում է արագ մեծացող այտուց, որը երբեմն կարող է հասնել շատ մեծ չափսերի: Կվինկեի այտուցը տեղակայվում է դեմքի վրա, աչքերի, շրթունքների, լեզվի, կոկորդի, սեռական օրգանների շրջանում եւ կարող է պահպանվել մի քանի օր: Պետք է գիտենալ, որ եթե այտուցը կոկորդի շրջանում է, կարող է երեխայի մահվան պատճառ դառնալ: Ձայնի փոփոխություն եւ եղնջացան նկատելիս պետք է անմիջապես բժշկի դիմել:

(Շարունակելի)

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Սիրի'ր, բայց սիրո գերի մի' դառնա:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875-1957)
Հայ մեծ բանաստեղծ, գրող

Գիտությունը ամեն բանի համ է տալիս՝ աղ է ասես:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Ավելի դյուրին է գործն անել, ինչպես պետք է, քան արդարացնել սեփական վատ աշխատանքը:

ՎԱՆ ԲՅՈՒՐԵՆ
(1782-1862)
Ութերորդ ԱՄՆ նախագահ

Եթե բրուտը ծեփել է մի գեղեցիկ անոթ, ապա կարող է դրանից ծեփել ե'ւ երկուսը, ե'ւ երեքը, ե'ւ մի ամբողջ հարյուրյակ:

ՍԵՐՎԱՆՏԵՍ
(1547-1616)
Իսպանացի գրող

Զբաղված մարդու մոտ հազվադեպ են անբան հյուրեր գնում, ճանճերը չեն թռչում դեպի եռացող պուտուկը:

ՖՐԱՆԿԼԻՆ
(1706-1790)
Ամերիկացի պետական գործիչ

Զանասիրությունը թեթեւացնում է աշխատանքը:

ՕՎԻԴԻՈՍ
(մ.թ.ա.43-մ.թ.ա.18)
Հին հռոմեացի գրող

Աշխատասեր հողագործը տնկում է ծառեր, որոնց պտուղները ինքը երբեք չի տեսնելու:

ՑԻՑԵՐՈՆ
(մ.թ.ա.106-մ.թ.ա.43)
Հին հռոմեացի փիլիսոփա

²Ü°Î¸à¶Ü°ð

** - Կինը ամուսնուն ասում է. «Ինձ դուր չի գալիս, որ դու ասում ես ԻՄ ՏՈՒՆԸ, ԻՄ ՄԵՔԵՆԱՆ, ԻՄ ԿԱՀՈՒՅՔԸ: Մենք ամուսիններ ենք, մեր մոտ ամեն ինչ ընդհանուր պետք է լինի: Դու ինձ չես լսում, ինչ ես փնտրում», - «ՄԵՐ շալվարը»:*

** - Կինը. «Հիմարի մեկը, անբան, ամբողջ կյանքս, ջահելությունս նվիրեցի քե'զ, իսկ դու անբանի մեկը դուրս եկար»... Ամուսինը. «Այ կնի՜կ, հերիքա դիպլոմիտ հետ խոսաս»...*

** - Ամուսինը կնոջը կանչում է պատշգամբ, ցույց է տալիս դեպի աստղերն ու ասում. «Ուզու՞մ ես էսօր գնամ քո համար ա ա ա ա ա ա ա ա ա ա յ էն աստղը բերեմ»: Կինը. «Ոչ մի աստղ, մինչեւ 10 տանը լինես!»:*

** - Առավոտյան կինը արթնացնում է ամուսնուն. «Սիրելիս, արթնացիր, արեւս, վեր կաց, իմ քաղցր ամուսին, արթնացիր: Սիրելիս, մաս-մաս չէ, դու լրիվ արթնացիր»:*

** Մեկի զոքանչը մահանում է, հավաքվում են ընկերները:*

- Դե, տղերք ջան, վաղը զոքանչիս տանում ենք Ղարաբաղ, թաղելու:

- Ո՞նց, դուք Ղարաբաղում արմատներ ունե՞ք:

- Չէ, նոր ենք տանում գցենք:

** - Ատամնաբուժը հիվանդի ատամները սարքելուց հետո ասում է. «Հիմա էս ջրով կողողես բերանդ ու կթքես»: Հիվանդը վախեցած հարցնում է. «Բժիշկ ջաաան, հեչ հույս չկա՞»:*

** - Զոքանչը գալիս է աղջկան ու փեսուն հյուր, փեսան դուռը բացում է. «Զոքանչ մայրի՞կ, էս երկա՞ր ես մնալու»: «Մինչեւ չզզվացնեմ»: Փեսան. «Փաստորեն, մի հատ կոֆե էլ չես հասցնի խմե՞լ»:*

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Մարտի 19-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Սերժ Սարգսյանը եւ Վլադիմիր Պուտինը քննարկել են հայ-ռուսական երկկողմ համագործակցությանը վերաբերող, ինչպես նաեւ միջազգային եւ տարածաշրջանային օրակարգի մի շարք արդիական հարցեր, անդրադարձել Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու որոշումից հետո, այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքին: Նախագահները մտքեր են փոխանակել ուկրաինական ճգնաժամի եւ դրանից դուրս գալու ուղիների վերաբերյալ: Այդ համատեքստում զրուցակիցներն անդրադարձել են Ղրիմում հանրաքվեի անցկացումից հետո ստեղծված իրավիճակին եւ արձանագրել, որ այն հանդիսանում է ազատ կամ արտահայտման միջոցով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման հերթական օրինակը: Միաժամանակ ընդգծվել է միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին, առաջին հերթին՝ ՄԱԿ-ի կանոնադրությանը, նվիրվածության կարեւորությունը:

Պետությունների ղեկավարները նաեւ քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը եւ այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Հեռախոսազրույցը կայացել է հայկական կողմի նախաձեռնությամբ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարտի 21-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ԱԳ նախարարությունում խորհրդակցություն է անցկացրել գերատեսչության ղեկավար անձնակազմի հետ:

Արտաքին գործերի նախարարը, նախարարի տեղակալները, ԱԳՆ գլխավոր քարտուղարը զեկուցել են իրենց համակարգման ոլորտներում իրականացված աշխատանքների, առկա խնդիրների, դրանց լուծման ուղղությամբ նախատեսված միջոցառումների եւ առաջիկա ծրագրերի մասին:

Արծարծված առանձին խնդիրների վերաբերյալ Սերժ Սարգսյանը հարցեր է ուղղել զեկուցողներին, իր դիտողություններն ու դիտարկումները ներկայացրել եւ հանձնարարականներ տվել պատասխանատուներին, խոսել նախարարության գործունեության գերակա ուղղությունների եւ առաջիկա անելիքների մասին:

Խորհրդակցության ավարտին Արտաքին գործերի նախարարության մի խումբ աշխատակիցներ բարեխիղճ եւ արդյունավետ աշխատանքի համար արժանացել են խրախուսանքի:

ՓՈԽԼՐԱԺՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ԿԱՌՈՒՅՑՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի վարչապետ, ՀՀԿ փոխնախագահ Տիգրան Սարգսյանը գտնվում է Բելգիայի թագավորության մայրաքաղաք Բրյուսելում, որտեղ մասնակցեց Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) գագաթաժողովին:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» ՀԿ գրասենյակում Տիգրան Սարգսյանը հանդիպում է ունեցել Եվրոպական խորհրդարանի մի շարք պատգամավորների, Եվրոպական հանձնաժողովի Արտաքին գործերի գրասենյակի, եվրոպական այլ կառույցների եւ միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների զարգացման հեռանկարի համատեքստում Հայաստանի վարչապետը եւս մեկ անգամ վերահաստատեց Հայաստանի իշխանությունների քաղաքական դիրքորոշումը, ըստ որի Հայաստանն իր արտաքին հարաբերությունների դոկտրինայում ամրագրել է հարաբերությունների հավասարակշռված բարելավում բոլոր գործընկերների հետ՝ ոչ ի հաշիվ մեկը մյուսի: Տիգրան Սարգսյանն իր խոսքում նշեց, որ «կամկամ-ի սկզբունքը Հայաստանի համար անընդունելի է, եւ առավել ընդունելի մոտեցումն է՝ հարաբերությունները կառուցել փոխլրացման սկզբունքով»:

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայաստանի 2014թ. պետբյուջեում 20 մլն դրամ է նախատեսված ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների համար:

Դրանց գործունեությունը համակարգող Հայաստանի նախագահի օգնականին կից գործող խորհուրդն իր 2014թ. փետրվարյան նիստում նշված գումարից ինը միլիոն դրամը բաշխել է խորհրդում ներկայացված ազգային համայնքների կազմակերպություններին: Գործադիրը հաստատել է կատարված հատկացումները ասորական երկու, բելոռուսական, գերմանական, եզդիական, լեհական, հունական, ռուսական, վրացական, ուկրաինական եւ քրդական համայնքների հասարակական կազմակերպություններին:

Խորհրդի նույն նիստի որոշմամբ երաշխավորվել է 2014թ. համար նախատեսված գումարից 11 մլն դրամը փոխանցել խորհրդի անդամ «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ հաշվեհամարին:

Իրավական ակտն ընդունվում է ամեն տարի: Ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները ստացված գումարներն օգտագործում են ազգային ինքնության պաշտպանությանն ուղղված կազմակերպական, կրթական ու մշակութային խնդիրների լուծման համար:

ՄԻԿՐՈՎԱՐԿԵՐ՝ ՑԱԾՐ ԵԿԱՄՈՒՏՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Ցածր եւ միջին եկամուտ ունեցող ընտանիքները հունիսից կկարողանան օգտվել բնակարանների վերանորոգման համար նախատեսված նոր վարկատեսակից:

Ֆրանսիական զարգացման գործակալությունը, Ազգային հիփոթեքային ընկերության հետ Հայաստանում կսկսի բնակարանային էներգարդյունավետության բարձրացման եւ միկրովարկերի ֆինանսավորման ծրագիրը, որով նախատեսվում է 14 մլն դոլարի վարկ տրամադրել մոտ 3000 ընտանիքների: Առաջին վարկատեսակը մինչեւ 2,5 մլն դրամին համարժեք միկրովարկերն են՝ առանց գրավադրման: Այս վարկատեսակով, եթե վարկառուն իր ստացած վարկային միջոցների 50 տոկոսից ավելին ծախսում է բնակարանի էներգարդյունավետության բարձրացման համար, ապա վարկի 10 տոկոսի չափով փոխհատուցում է ստանում Եվրամիությունից, որն ուղղվելու է վարկի մարմանը: Մյուս վարկատեսակն ուղղված է հենց էներգարդյունավետության բարձրացմանը եւ ենթադրում է մինչեւ 5,5 մլն դրամ վարկավորում: Այս վարկատեսակը պետք է օգտագործվի միայն էներգարդյունավետության բարձրացման համար, իսկ վարկառուները Եվրամիության կողմից կֆինանսավորվեն 5 տոկոսով: Վարկերը կտրամադրվեն 5-10 տարի ժամկետով, մինչեւ 2 տարի մարման արտոնյալ ժամանակաշրջանով:

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում, մարտի 19-ին, Վ.Շեքսպիրի «Լիր արքա» հայ-վրացական համատեղ ներկայացման առաջնախաղով մեկնարկեց Շեքսպիրյան հերթական միջազգային փառատոնը, որը նվիրվում է անգլիացի դրամատուրգ Վիլյամ Շեքսպիրի ծննդյան 450-ամյակին:

Փառատոնին մասնակցելու համար Երեւան են ժամանել Շեքսպիրյան փառատոնների եվրոպական ցանցի տնօրենները՝ Անգլիայից, Լեհաստանից, Գերմանիայից, Հունգարիայից, Ռումինիայից, Իսպանիայից, Չեխիայից, Դանիայից:

Ինչպես նշեց փառատոնի տնօրեն Հակոբ Ղազանչյանը, փառատոնը այս տարի անց է կացվում երկու փուլով. երկրորդ մասը կանցկացվի աշնանը, իսկ մեկնարկած մասը կոչվում է Շեքսպիրյան օրեր: «Նրա անունը անմիջական կապված է հայկական թատրոնի հետ: Հայ թատրոնի բոլոր մեծանուն դերասանները մնացել եւ հիշվել են իրենց խաղացած շեքսպիրյան դերերով: Շեքսպիրը հոգեհարազատ հեղինակ է մեզ համար»,- ասաց Ղազանչյանը:

Փառատոնը անցկացվում է Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ եւ «Վիվասել-ՄՏՍ»-ի հովանավորությամբ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԵՒՆ

Մարտի 18-ին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահի անչնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրշիկին: Հանդիպմանը քննարկվել են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում տիրող իրավիճակին վերաբերող մի շարք հարցեր:

ԱՆՎՃԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի ավելի քան 200 քաղաքացիներ հնարավորություն ունեն անվճար կրթություն ստանալու Ռուսաստանի Դաշնության առաջատար բուհերում: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հայաստանում ՌԴ դեսպանատան առաջին քարտուղար եւ «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցչության ղեկավարի պաշտոնակատար Մարկ Կալինինը: Նրա խոսքով, ծրագրին մասնակցողները Ռուսաստանում ոչ միայն անվճար ուսում կստանան, այլեւ հանրակացարան:

«Ռուսաստանի բուհերից մեկում կրթություն ստանալու համար հաշվի է առնվելու ատեստատի կամ դիպլոմի միջին միավորը: Ուշադրություն է դարձվելու, որ «երեքներ» չլինեն: Այնուհետեւ մասնակիցները կանցնեն ռուսաց լեզվի թեստավորում, ասպիրանտներն էլ ռեֆերատ կգրեն: Մրցույթի արդյունքում կընտրվեն լավագույնները: Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 25-ը».- ասաց նա: «Ռոսսոտրուդնիչեստվոն» եւ Հայաստանի կրթության ու գիտության նախարարությունը 2014-2015 ուստարում հայտարարում են ընդունելություն կրթական կազմակերպություններում օտարերկրացի քաղաքացիների, առանց քաղաքացիության անչանց եւ արտերկրում բնակվող հայրենակիցների համար ռուսական կողմի հաշվին միջին՝ մասնագիտական, բարձրագույն կրթության եւ լրացուցիչ մասնագիտական կրթության կրթական ծրագրերով Ռուսաստանի կառավարության՝ 2013 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 891 քվոտայի որոշմանը համապատասխան:

ԿԳՈՐԾԱՐԿՎԵՆ ՆՈՐ ԱՐԱԳԱՉԱՓԵՐ

Հայաստանի ավտոճանապարհներին մարտի 24-ին կգործարկվեն երթեւեկության արագության նկատմամբ վերահսկողության նոր արագաչափ սարքեր: Մասնավորապես, գործարկվելու են Մ-2 «Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի Իրանի Իսլամական Հանրապետության սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհի 187.4-րդ կմ 1 արագաչափ՝ երկու ուղղություններով, որտեղ երթեւեկության համար թույլատրելի առավելագույն արագությունը 70 կմ/ժ է, Մ-2 «Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի Իրանի Իսլամական Հանրապետության սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհի 300.2-րդ կմ 1 արագաչափ՝ երկու ուղղություններով՝ երթեւեկության համար թույլատրելի առավելագույն արագությունը 60 կմ/ժ է:

ՎԱԽՃԱՆԱՎԵԼ Է ԱՐԱ ՇԻՐԱԶԸ



Մարտի 17-ին 73 տարեկանում կյանքից հեռացել է Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ, Հովհաննես Շիրազի եւ Սիլվա Կապուտիկյանի որդի Արա Շիրազը:

Արա Շիրազը ծնվել է 1941թ. հունիսի 8-ին, Երեւանում: 1966թ. ավարտել է Երեւանի թատերական արվեստի ինստիտուտը: Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների Հայաստանում եւ արտերկրում: 1968թ.-ից Հայաստանի Նկարիչների միության անդամ է: Նրա աշխատանքները ցուցադրվել են Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Թբիլիսիում, Բեյրութում, Լոս Անջելեսում, Չիկագոյում, Մոնրեալում, Նյու Յորքում, Լոնդոնում, Փարիզում եւ այլուր: 1977թ. արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր նկարչի կոչմանը, 1979թ.՝ ՀԽՍՀ Պետական մրցանակի, հետագայում՝ ժողովրդական նկարչի կոչմանը: Եղել է ԽՍՀՄ Նկարիչների միության քարտուղարության անդամ: 1987թ. ընտրվել է Հայաստանի Նկարիչների միության նախագահ: 2009թ. արժանացել է ՀՀ ժողովրդական նկարչի կոչմանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ

ՊԱՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐ ԱՍՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Թբիլիսիի տասնամյա կրթությամբ նկարչական ուսումնարանը (տնօրեն՝ Նոդար Մումլաձե), որը, ի դեպ, տեղակայված է հայկական 104-րդ դպրոցի առաջին հարկում, պարբերաբար ստանում է այլեւայլ բովանդակության ցուցահանդեսների մասնակցելու հրավերներ՝ աշխարհի տարբեր երկրներից:

2013-ին ուսումնարանը նման հրավեր ստացավ Լեհաստանի հանրապետությունից: Այստեղ՝ Տորան քաղաքի մանկական պլաստիկ ստեղծագործության պատկերասրահ-կենտրոնում տեղի ունեցավ երիտասարդ ստեղծագործողների հերթական՝ 17-րդ միջազգային մրցույթը, որը նվիրված էր բնության եւ էկոլոգիայի պաշտպանությանը եւ ընթացավ՝ «Ամեն ինչ կանաչ, ամեն ինչ կապույտ» նշանաբանով: Այդ լայնամասշտաբ ցուցահանդես-մրցույթին, արժանավոր կերպով իրենց մասնակցությունը բերեցին նշյալ ուսումնարանի մի խումբ աշակերտներ: Լեհական այդ քաղաքում ուսումնարանի ուսմասվար Դիանա Սանբուրին եւ գրաֆիկայի բաժնի դասատու Նինո Բասիլաշվիլին, անթաքույց գոհունակությամբ, խոսեցին ու կիսվեցին մրցույթի մասնակիցների հետ եւ իրենց սաների՝ տարբեր մրցույթներում ու, մասնավորապես, այս մրցույթին պատշաճ եւ մեծ պատասխանատվությամբ պատրաստվելու մասին, որը եւ, ինչու չէ, արդարացրեց ուսումնարանի ղեկավարության ու մանկավարժների սպասումները:

Մրցույթի միջազգային ժյուրիի որոշմամբ, արդյունքում, տարիքային համապատասխան հարթակում հաղթեց ուսումնարանի՝ գրաֆիկայի խմբի 8-րդ դասարանի աշակերտուհի Ասմինե Ղազարյանը, ով միաժամանակ պարգեւատրվեց թե' մեդալով, թե' դիպլոմով: Ասմինեն խոստովանեց, որ հաղթանակի զգացումը իրեն, ասես, թեւեր է տվել...

Դիպլոմներ ստացան նաեւ ուսումնարանի տարբեր դասարանների աշակերտներ Կոտե Ղվաբերիձեն (8-րդ դաս.), Նինա Սարգիսովան (8-րդ դաս.), Մարի Քուշաշվիլին (8-րդ դաս.), Թաթիա Մամուլաշվիլին (6-րդ դաս.), Էլենե Դավիթաշվիլին (6-րդ դաս.):

Դիպլոմների արժանացան նաեւ ուսումնարանի դասատուներ Նինո Բասիլաշվիլին, Թեոնա Գասիշվիլին եւ Թամունա Նակաիձեն: Ի սրտե շնորհավորում ու լուսավոր ճանապարհ ենք մաղթում ձեզ, ապագա գեղանկարիչներ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱՆԴ ԱՆՈՒՆՈՎ ՓԻՂԸ ԵՐԵՎԱՆԻՑ ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է ԹԲԻԼԻՍԻ...

Երեւանի կենդանաբանական այգու Գրանդ անունով փղին տեղափոխում են Թբիլիսիի կենդանաբանական այգի:

Ըստ Երեւանի կենդանաբանական այգու սմբակավորների բաժնի պատասխանատու Թոբիաս Դորնբուշի, Գրանդի տեղափոխությունը Թբիլիսիի կենդանաբանական այգի, բավական կարեւոր է: Թոբիաս Դորնբուշը մատնանշեց փղիկի տեղափոխման երեք պատճառ. առաջին՝ փիղն այստեղ մենակ է, երկրորդ՝ սերունդ կտա, եւ երրորդ՝ վիրահատական միջամտության կենթարկվեն փղի ժանիքները:

«Թբիլիսիում փիղը մենակ չի լինի, կունենա զուգընկեր ունենալու եւ սերունդ տալու հնարավորություն: Ավելի ճիշտ կլինի, որ փղի ժանիքի վիրահատությունը կատարվի Թբիլիսիում, քանի որ այն պետք է կատարել փակ տարածքում: Թբիլիսիի կենդանաբանական այգում կան վիրահատությունը բարեհաջող իրականացնելու բոլոր պայմանները»,- նշեց Դորնբուշը:

Երեւանի կենդանաբանական այգին առանց փղի չի մնա: Թբիլիսիի կենդանաբանական այգուց Գրանդից 10 տարով երիտասարդ փիղ կբերվի: Դրանից հետո՝ ժամանակի ընթացքում, այգում կստեղծվեն առավել լավ պայմաններ: Այդ հանգամանքը ապագայում կտա նոր փղի համար ընկերուհի բերելու հնարավորություն:

ՓԱՌԱՏՈՆ

ԿՈՎԿԱՍՅԻ ՌՈՔ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՀԱՄԵՐԳԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի երաժիշտները ելույթ կունենան Թբիլիսիում անցկացվելիք Tbilisi BLITZKRIEG Fest միջազգային ռոք փառատոնին, որը կկայանա մարտի 25-27-ին:

«Առաջին երկու օրերի ընթացքում երաժիշտները կմրցեն Հարավային Կովկասն աշխարհի խոշորագույն ռոք փառատոնում՝ Wacken Open Air-ում ներկայացնելու հարցում, որը տեղի կունենա հուլիսի 31-ից օգոստոսի 3-ը՝ Գերմանիայում: Երկրորդ տեղը զբաղեցրած խումբը կմեկնի «Underwall Festival» միջազգային փառատոնին, որն ամեն տարի տեղի է ունենում որվաթիայում»,- հայտնեցTbilisi BLITZKRIEG Fest փառատոնի PR մենեջեր Սոֆիա Թեթրաձեն:

Կազմակերպիչների խոսքերով՝ մասնակիցների ընտրությունը տեղի է ունեցել 2013թ.-ի սեպտեմբերին եւ ընթացել է մի քանի փուլերով. հայտերի ընդունում, լսումներ, ընտրություն:

Վրաստանն ու Ադրբեջանը ներկայացնելու են 3-ական խմբեր, իսկ Հայաստանը՝ մեկ խումբ:

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2014

ՎՐԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՄԱՐԻԿՈ ԷԲՐԱԼԻՁԵՆ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՐԱՄ MP3-Ն

«Եվրատեսիլ-2014» երգի միջազգային մրցույթում, որը մայիսի 6-10-ը տեղի է ունենալու Դանիայում, Վրաստանը կներկայացնեն երգչուհի Մարիկո էբրալիձեն եւ «The Shin» ջազային խումբը, իսկ Հայաստանը՝ երգիչ, երգիծական ժանրի արտիստ Արամ MP3-ն:

«Եվրատեսիլ-2014» 59-րդ ամենամյա մրցույթը տեղի է ունենալու Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենի B&W Hallerne արենայում: Երրորդ անգամ է, ինչ մրցույթն անցկացվելու է Դանիայում, վերջինը՝ 2001 թվականին էր: Մրցույթի կիսաեզրափակիչները նախանշված են մայիսի 6-ին եւ 8-ին, իսկ եզրափակիչը՝ մայիսի 10-ին: Մրցույթին մասնակցելու են մոտ 37 երկրներ: 12 երկիր հրաժարվել է մասնակցել «Եվրատեսիլ-2014» երգի միջազգային մրցույթին, դա պատճառաբանելով ոչ միայն ֆինանսական խնդիրներով, այլեւ մրցույթի հանդեպ հետաքրքրության նվազմամբ:

ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆՅԻ ԿԱՐԱՏԵԻՍՏՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի այքիքենդո ոճի 30 կարատեիստներ մասնակցեցին Վրաստանում կայացած կոնտակտային կարատեի միջազգային մրցաշարի, նվաճելով 5 ոսկե մեդալ: Հայաստանի ներկայացուցիչները նվաճել են նաեւ՝ 6 արծաթե եւ 3 բրոնզե մեդալներ:

Մրցաշարին մասնակցեցին Հարավային Կովկասի 3 երկրների՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի մարզիկները:

Հայաստանցի մարզիկներն առանձնակի հաջողության հասան նաեւ Թբիլիսիի «Դե Կադե» սպորտային համալիրում անցկացված քիք-բոքսինգի միջազգային մրցաշարին: Մրցումներին, որոնց մասնակցում էին Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի շուրջ 300 մարզիկ-մարզուհիներ, Գավառի մարզադպրոցը ներկայացնող սաներն արժանացել են երկու ոսկե եւ մեկ բրոնզե մեդալների:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայաստանի մինչեւ 15 տարեկան աղջիկ բասկետբոլիստուհիները, ովքեր ներկայումս Վրաստանում անցկացնում են իրենց ուսումնամարզական հավաքը, մրցակցի խաղադաշտում՝ 39:25 հաշվով, ընկերական խաղում պարտության մատնեցին վրացի հասակակիցներին: Այս հավաքի ընթացքում Հայաստանի պատանի մարզուհիները մինչ այս մրցամարտը արդեն երկու անգամ հանդիպել էին Վրաստանի բասկետբոլիստուհիներին եւ երկու մրցամարտերում էլ հաղթել՝ 46:36 եւ 47:23 հաշիվներով:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ցավազրկիչ եւ թմրանյութ: 6.Անկուշտ, անհագ: 9.Ստորգետնյա կույր կենդանի: 10.Արեգակնային համակարգի մոլորակ: 12.Մայրական տաք ...: 13.Կոստյումը օտարահունչ բառով: 17.Քաղաք Հայաստանի Շիրակի մարզում: 20.Վիրահայոց ... առաջնորդ: 22.Շատ տգեղ, այլանդակ: 24.Հայ անվանի դերասան ... Խաչվանքյան: 26.Մետրոյի ...: 29.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 31.Մողեսի տեսակ: 34.Ընտանի կենդանի: 36.Բերանի «բնակիչ»: 37.Քաղաք Հայաստանում: 38. ... Ջերսի, ... Յորք: 39.Հեքիաթ «Տերն ու ...ն»: 40.Ռուս կոմպոզիտոր: 43.Պետություն Ասիայում: 45.Ջրի նստվածք, դիրտ (բրբ.): 47.Նկարչի արարածը: 48.Խելք ու ...: 49.Հայ բռնցքամարտիկ ... Մունչյան: 52.Ոչխարի յուղոտ մասը: 56.Մասիսի «եղբայրը»: 58.Մարմնի մասնիկ: 59.Ջիու տեսակ: 61.Արժեք, սակ: 62.Թբիլիսյան շոկոլադատուփ «...»: 63.Քաղաք Ռուսաստանում: 64. ... Մարինո, ... Դիեգո: 65.Եվայի եղբայրասպան որդին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Օձին թշնամի, այգու բարեկամ փոքրիկ կենդանի: 3.Իրանում վրացիներով բնակեցված վայր: 4.Ծովի, գետի ...: 5.Պետություն Ասիայում: 7.Երգ «Միմինո» ֆիլմում՝ «Ջիտո ...»: 8.Ուրախ, անհոգ, երջանիկ: 11.Հացահատիկի պահեստարան: 14.Եկեղեցու արձանիկ: 15.«Պարտքատերը ... գնաց ...» (Հովհ.Թումանյան): 16.Նիկոլայը կամ Նիկոլոզը ընտանեկան շրջապատում: 18.....ություն, ...անյութ: 19.Ցցվածք, ցցունք: 21.... ու տաղ: 23.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 25.«Թոմ Սոյերի ...ները»: 27.Թեւի մաս: 28.Ջիվանի «...ավոր ընկեր»: 29.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 30.Հունական դիցարանի աստվածուհի: 32.Գույնը գցած, դալուկ: 33.Ջունգլիներում կորած մանչուկ: 35.Առողջարանային քաղաք Սեւ ծովի ափին: 41.Անձնական դերանուն: 42.Շոկոլադի բաղադրիչ: 44.Ոխ, վրեժ: 46.Գիտուն, պայծառատես: 49.Փաստաթղթերը վավերացնող գործիչ: 50.Ամպամած, թխպոտ: 51.Ծխնելույզից դուրս եկածը: 53.Եվրոպական երկրի մայրաքաղաք: 54.Մկրտություն: 55.Ոստյուն, ցատկոց: 57.Սգալ բայի երկրորդ դեմքը (ըղձական ժամանակ): 60.Իսլամի հիմնական ուղղություններից:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Կոմիտաս: 8.Իրարու: 9.Ելք: 10.Ցուլիկ: 13.Ադամո: 18.Ազոտ: 19.Ռութենիում: 22.Տոնել: 23.Եսենին: 28.Կլավա: 29.Իկոնա: 32.Աղա: 33.Լսել: 34.Հռոմի: 37.Ղլե: 39.Էպոս: 41.Լիզա: 44.Գոտի: 46.Սթիվ: 47.Վախ: 49.Աչք: 50.Վալլոնե: 52.Անան: 54.Միրեյ: 55.Գրեյ: 56.Գա: 57.Նավոի: 58.Լռիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Խմել: 2.Կտակ: 3.Օսեր: 4.Թիքա: 5.Չարազ: 6.Յուղոտ: 11.Ուռուտ: 12.Իռեն: 14.Դակել: 15.Մոտիվ: 16.Հիլ: 17.Էմե: 20.Թորոս: 21.Նեպալ: 24.Սկահ: 25.Նատո: 26.Նանի: 27.Գալլ: 30.Կլեպ: 31.Ներս: 35.Ռելս: 36.Մոզի: 37.Դրո: 38.Ենիչերի: 40.Ոչխար: 42.Իթան: 43.Ավանակ: 44.Գալյա: 45.Տանգո: 48.Ավիշ: 51.Լեն: 52.Այլ: 53.Ագի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445